

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ, ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԺՈՂՈՎ ԲՐԱԿԼԱՅՆ (ԱՄՆ) ՔԱՂԱՔՈՒՄ

Սույն թվականի հունիսի 11—18-ը ԱՄՆ-ի Մանչեստր նահանգի Բրակլայն քաղաքում գտնվող Հույն Ուղղափառ աստվածաբանական դպրոցում տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների համաժողով՝ Մկրտության, Հաղորդության և Ձեռնադրության խորհուրդների մասին:

Շուրջ 60 տարիներ առաջ հիմնադրված «Հավատո և կարգի» հանձնախումբը ձգտում է քրիստոնեական Եկեղեցիների միջև համերաշխություն գոյացնել այս երեք խորհուրդների ընդունման հարցում: Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը իր գոյության առաջին իսկ օրվանից զբաղվել է Եկեղեցիների միության հարցով և այդ ուղղությամբ քրիստոնեական հարանվանությունների միջև բազմաթիվ ժողովներ և երկխոսություններ է կազմակերպել:

1982 թվականին ԵՀԽ-ի կազմակերպած Լիմայի ժողովում կազմվել է Մկրտության, Հաղորդության և Ձեռնադրության մասին բոլոր երկխոսությունների և ժողովների որոշումները բովանդակող մի փաստաթուղթ՝ իբրև արդյունք երկար տարիների աշխատանքի՝ հաշվի առնելով ԵՀԽ-ի բոլոր եկեղեցիների կարծիքները:

ԵՀԽ-ի անդամ բոլոր Եկեղեցիներին կոչ է արվել Լիմայի ժողովի փաստաթղթի մասին հայտնել իրենց կարծիքները: Բոլոր կարծիքները պետք է պատրաստ լինեն մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը:

Բրակլայնի համաժողովում ելույթներ ունեցան «Հավատո և կարգի» հանձնախմբի վարիչ դոկտ. Գունթեր Գասմանը, ինչպես նաև դոկտ. Լիմուրիսը, պրոֆ. Ն. Նիսիոտիսը, Ներսես եպս. Պոլապալյանը, Սմոլենսկի Կիրիլ արքեպիսկոպոսը, Տրանսիլվանիայի միտրոպոլիտ Անտոնին, հայր Ջորջը, պրոֆ. Հոպկոն և միտրոպոլիտ Խրիստոստոմոսը:

Վերոհիշյալ զեկուցումների հիման վրա ընդհանուր և խմբակային զրույցներ տեղի ունեցան ժողովի մասնակիցների միջև:

Համաժողովն իր եզրակացությունները արձանագրեց հետևյալ կերպ. համաժողովին մասնակից Ուղղափառ Եկեղեցիները ողջունում են Լիմայի փաստաթուղթը՝ իբրև մի նոր քայլ էկումենիկ շարժման մեջ: Դարեր շարունակ Եկեղեցիների միջև եղած սառնությունից և մեկուսացումից հետո Քրիստոսի մեկ Եկեղեցին միության միջոցներ է փնտրում: Եվ այդ միության ամենակարևոր ճանապարհը Եկեղեցիների կողմից Մկրտության, Հաղորդության և Ձեռնադրության խորհուրդների ճանաչումն է:

Համաժողովն իր զեկուցագրի մեջ ընդգծեց, որ Մկրտության, Հաղորդության և Ձեռնադրության խորհուրդների մասին Լիմայի փաստաթուղթը դեռևս վերջնական վիճակում չէ, հետևաբար չի կարող ընդունելի լինել ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիների կողմից:

Առաջարկվեց, որ *ա.* այս երեք խորհուրդների վերաբերյալ երկխոսությունները շա-

րունակվեն հարանվանությունների միջև, որպեսզի դեռևս չքննարկված հարցերը պարզաբանվեն, *բ.* որ Ուղղափառ Եկեղեցու երեք խորհուրդների հետ առնչվող Լիմայի վերոհիշյալ փաստաթուղթը դառնա Եկեղեցիների բոլոր անդամների ուշադրության առարկան, որպեսզի Եկեղեցին, որպես կենդանի հաղորդականություն, կարողանա ասել իր խոսքը այս կարևոր փաստաթղթի վերաբերյալ:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Ս. Էջմիածնից համաժողովին մասնակցում էին Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պոսպալյանը և Տ. Եփրեմ քհն. Գալաճյանը (ԱՄՆ), իսկ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից՝ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը:

ԹՂԹԱԿԻՑ